«Պաշտոնական հայտարարություններ» կայք էջի ստեղծման և վարման ծառայությունների»
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԾՁԲ - 07/66

ք. Երևան «16» 11 2007թ.

«Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս Կազմակերպության պետի տեղակալ Ս. Մելիքյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու», մի կողմից, և « Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն_, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Մխիթարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում *«Պաշտոնական հայտարարություններ» կայք էջի ստեղծման և վարման ծառայությունների* մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների և սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Կատարողին տրամադրել սույն պայմանագրի 7.1 կետում նշված եզրակացության պատճենը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է _22957.0_ հազ. (_քսաներկու միլիոն ինը հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

41.1 Պայմանագրային գնի 50 տոկոսը՝ 11478500 (տասնմեկ միլիոն չորս հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, որը հաշվարկվում է ծառայության ընդհանուր գնի մեջ և մարվում մինչև նախատեսված ծառայությունների ավարտը:

4.2 Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագիրը կնքելու և 7.1 կետում նշված լիազոր մարմնի դրական եզրակացության առկայության պահից մինչև սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված Ծառայության հանձնումը շուկայական գների զգալի տատանման դեպքում կողմերից մեկի նախաձեռնությամբ տեղի է ունենում գների վերահաշվարկ, ինչի արդյունքում սահմանված գները պետք է 5 տոկոսով նվազ լինեն որոշված միջին շուկայական գնից: Պատվիրատուի կողմից Ծառայության միջին շուկայական գինը հաշվարկվում է՝ Հայաստանում տվյալ ոլորտում գործող առնվազն երեք տնտեսավարող սուբյեկտների այդ օրվա դրությամբ առաջարկվող գների հիման վրա: Պատվիրատուն գների հարցումը կատարում է գրավոր և վերոգրյալ սուբյեկտների գրավոր պատասխանի հիման վրա հաշվարկում և հայտնում է Կատարողին Ծառայության գինը:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճորումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,05 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության արժեքի 0,05 %-ի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում մինչև 2007 թվականի դեկտեմբերի 30-ը:

Տվյալ գնման ընթացակարգը և պայմանագիրը գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխանելու հանգամանքը հավաստող լիազոր մարմնի եզրակացության առկայությունը Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է:

Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2 , N 3 և N4 հավելվածները, բաղկացած 5 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Սույն պայմանագրով կանխավճարի ապահովումը վերադարձվում է Կատարողին պայմանագրի կատարման ավարտից 40 օրվա ընթացքում կամ կողմերի համաձայնությամբ՝ կատարմանը համամասնորեն:

7.6 Սույն պայմանագրով նախատեսված՝ իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուի անունից իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ք. Երևան, Կոմիտասի պող. 54[բ]	ք. Երևան, Վրացական 4-րդ նրբ.,7-10
Հայէկոնոմբանկ, Արաբկիրի մ/ճ	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»ՓԲԸ
Հ/Հ 163058561289	Հ/Հ 220000129423-000
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«16» 11 2007թ. կնքված
N ԾՁԲ - 07/66 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Կայքէջի ստեղծման նպատակը

Հայաստանի Հանրապետությունում պաշտոնական հայտարարությունները, համաձայն ընդունված և գործող իրավական ակտերի ենթակա են պարտադիր հրապարակային ծանուցման: Ներկայումս, պաշտոնական հայտարարությունները տպագրվում կամ հաղորդվում են զանգվածային լրատվության տարբեր միջոցներով և ոչ միշտ են հասանելի հանրության լայն զանգվածներին և ենթակա վերահսկողության:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արագ զարգացման տեմպերը, Ինտերնետ գլոբալ ցանցից օգտվողների քանակի զգալի ավելացումը և այդ ցանցից տեղեկատվության ստացման մատչելիությունը հասարակության լայն զանգվածների համար, հստակ կարելի է ասել, որ ինտերնետային տեղեկատվական պորտալները, լրատվական կայքէջերը մեծ մասայականություն են վայելում և լրատվական դաշտի անբաժանելի մաս են հանդիսանում:

«Պաշտոնական հայտարարություններ» կայքէջի (այսուհետև Կայք) ստեղծման նպատակն է՝ հիմք ընդունելով «Ինտերնետով Հրապարակային Ծանուցման մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2007թ. ապրիլի 9-ին, ստեղծել պաշտոնական հայտարարությունների կենտրոնացված, համակարգված, հանրության համար մշտապես հասանելի և անվճար տեղեկատվական աղբյուր: Այն հնարավորություն է ընձեռելու օգտագործողներին օպերատիվ կերպով ստանալու իրենց հետաքրքրող տեղեկությունները, իսկ ցանկության դեպքում՝ օգտվելով անվճար բաժանորդագրման ընձեռնվող հնարավորությունից՝ էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկանալ իրենց հետաքրքրող բնագավառին վերաբերվող բոլոր նոր հայտարարություններին: Ինչպես նաև կայքի ստեղծումը հնարավորություն կտա օգտագործողներին ծանոթանալու նախքինում հրապարակված և արխիվացված հայտարարություններին:

2. Կայքի կառուցվածքը

Կայքի ծրագրային համակարգը բաղկացած է լինելու երկու հիմնական մասերից՝ կայքէջից և կայքի կառավարման համակարգից:

Կայքէջը ապահովելու է կայքի տեղեկատվական շտեմարանում (այսուհետև Շտեմարան) պահվող տեղեկատվության արտապատկերումը (այսուհետև Հայտարարություններ) և հասանելի է լինելու կայքէջի այցելուների և կայքի օգտագործողների համար (այսուհետև Օգտագործողներ): Այն պետք է նաև ապահովի ըստ Օգտագործողի կողմից ներմուծված առանցքային բառերի որոնման իրականացում Շտեմարանում գրանցված Հայտարարություններում և որոնման արդյունքների արտապատկերումը:

Կայքի կառավարման համակարգը ապահովելու է Շտեմարանում նոր Հայտարարությունների մուտքագրման, առկա Հայտարարությունների խմբագրման, արխիվացման և հեռացման աշխատանքների իրականացումը: Կայքի կառավարման համակարգից օգտվելու հնարավորություն և իրավունք պետք է ունենա միայն կայքը վարող անձը:

Կայքում զետեղված տեղեկատվության ներկայացման լեզուն հայերենն է: Սակայն, պետք է ապահովված լինի նաև անհրաժեշտության դեպքում Հայտարարություններում օտար լեզուներով տեղեկություններ ներկայացնելու հնարավորությունը:

2.1. Կայքէջի կառուցվածքը

Կայքէջը իրենից ներկայացնելու է ինտերակտիվ, դինամիկ փոփոխվող էջ, որի ֆունկցիոնալ հնարավորությունների միջոցով Օգտագործողը կկարողանա ստանալ իրեն հետաքրքրող տեղեկությունները Կայքի Շտեմարանից:

Կայքէջում կառուցվածքային բաժանումը ենթադրում է հետևյալ բաժինների առկայությունը՝

Վերնագրի բլոկ. Իրենից ներկայացնելու է Կայքէջի գրաֆիկական ինտերֆեյսի մի տարր, պարունակելու է Կայքէջի անվանումը, անփոփոխ է և արտապատկերվելու է Կայքէջի բոլոր էջերում:

Ֆունկցիոնալ կոճակների վահանակ. Վահանակում տեղադրված «ԳԼԽԱՎՈՐ ԷՋ», «ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ», «ԱՐԽԻՎ», «ՈՐՈՆՈՒՄ», «ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ», «ՄԵՐ ՄԱՍԻՆ» և «ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԿԱՅՔԻՑ» կոճակները հնարավորություն են տալու Օգտագործողին անցում կատարելու Կայքեջի հիմնական գործառույթների իրականացումը ապահովող էջերին: Ֆունկցիոնալ կոճակների վահանակը նույնպես անփոփոխ է և արտապատկերվելու է Կայքէջի բոլոր էջերում:

Տեղեկատվական բլոկ. Այստեղ արտապատկերվելու են Շտեմարանից ստացվող տեղեկությունները՝ համաձայն Օգտագործողի կողմից ընտրված բնութագրիչների:

Էջատակ. Իրենից ներկայացնելու է Կայքէջի գրաֆիկական ինտերֆեյսի մի տարր, որը պարունակելու է Կայքէջի հեղինակարին իրավունքի մասին տվյալներ և այլ տեղեկություններ, անփոփոխ է և արտապատկերվելու է Կայքէջի բոլոր էջերում:

Ֆունկցիոնալ կոճակների վահանակում գտնվող կոճակների նկարագիրը հետևյալն է՝

ԳԼԽԱՎՈՐ ԷՋ

Կայքի Գլխավոր էջը արտապատկերվում է կայք մուտք գործելիս:

Կայքի գլխավոր էջի վերին կենտրոնական մասում ներկայացված է լինելու ուղերցը Օգտագործողներին (ուղերձի տեքստը կտրամադրվի ՀՀ արդարադատության նախարարության կողմից): Ուղերցից բացի, Կայքի գլխավոր էջի կենտրոնական մասում պետք է ներկայացվեն Շտեմարանում մուտքագրված կամ փոփոխված վերջին 5 հայտարարությունների հղումները և համառոտ նկարագրերը, սակայն պետք է ապահովված լինի , անհրաժեշտության դեպքում, արտապատկերվող վերջին հայտարարությունների քանակը փոփոխելու հնարավորությունը: Անհրաժեշտ է ապահովել նաև Գլխավոր էջի աջ կողմում մեկ սյունակով Կայքի աշխատանքին վերաբերվող նորությունների (նոր գործառույթների ավելացման կայքի կառուցվածքային փոփոխությունների և կայքի աշխատանքի վերաբերյալ այլ տեղեկությունների) ներկայացման հնարավորությունը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս գործառույթի կիրառմամբ Օգտագործողը տեղեկություններ է ստանում Շտեմարանում առկա Հայտարարությունների վերաբերյալ:

Հայտարարությունների մասին տեղեկությունները արտապատկերվում են էջի տեղեկատվական բլոկում և ներկայացվում են խմբավորված ըստ Օգտագործողի ընտրության՝ ըստ Հայտատուների կամ ըստ Հայտարարության տեսակի:

Ըստ Հայտատուների խմբավորված, Շտեմարանում առկա Հայտարարությունների մասին տեղեկությունները արտապատկերելիս, անհրաժեշտ է ապահովվել հետևյալ տեղեկությունների ներկայացումը.

Հայտատուների անվանումները,

Հայտատուների անվանումից հետո, անվանումից առանձնացված, անհրաժեշտ է ներկայացնել այդ Հայտատուի կողմից տվյալ պահին Շտեարանում առկա հայտարարությունների քանակը: Նմանատիպ տեղեկատվություն պետք է ներկայացվի նաև Հայտատուի կառուցվածքում ընդգրկված (եթե այդպիսիք առկա են) միավորների համար:

Օգտագործողի կողմից Հայտատուի անվանանման ընտրության դեպքում առանձին էջում, վերը նշված կարգով, տրվում է տեղեկատվություն միայն այդ Հայտատուի և Հայտատուի կառուցվածքում ընդգրկված (եթե այդպիսիք առկա են) միավորների համար: Եթե Հայտատուի կառուցվածքային միավորների կողմից տրված հայտարարությունների քանակը զրո է, ապա այդ միավորի անվանումը չի արտապատկերվում տվյալ ցանկում: Հայտատուի կառուցվածքային միավորի ընտրության պարագայում նոր էջով ներկայացվում են իր կողմից տրված Հայտարարությունների վերնագրերը, հրապարակման (այն է Շտեմարանում մուտքագրման) ամսաթվերը և համառոտ նկարագրերը՝ խմբավորված ըստ հայտարարությունների տեսակների: Նույն կերպ ներկայացվում են տեղեկություններ Հայտատուի կողմից տրված հայտարարությունների վերաբերյալ, երբ Օգտագործողի կողմից ընտրված Հայտատուն չունի կառուցվածքային միավորներ:

Ըստ Հայտարարության տեսակի խմբավորվված, Շտեմարանում առկա Հայտարարությունների մասին տեղեկությունների արտապատկերումը իրականացվում է նույն սկզբունքով ինչ նախորդ դեպքում: Այս տարբերակում ներկայացվում են.

Հայտարարությունների տեսակները

Հայտարարությունների տեսակների անվանումից հետո, անվանումից առանձնացված, ներկայացվում են տվյալ պահին Շտեարանում առկա այդ տեսակի հայտարարությունների քանակները: Նմանատիպ տեղեկատվություն պետք է ներկայացվի նաև հայտարարությունների տեսակների ենթատեսակների համար (եթե այդպիսիք առկա են) համար:

Օգտագործողի կողմից հայտարարության տեսակի ընտրության դեպքում առանձին էջում, վերը նշված կարգով, տրվում է տեղեկատվություն միայն այդ տեսակի և դրա ենթատեսակների (եթե այդպիսիք առկա են) Հայտարարությունների մասին: Արտապատկերվում են միայն այն հայտարարությունների տեսակները և ենթատեսակները, որոնք պարունակում են մեկ կամ ավելի Հայտարարություններ: Եթե Շտեմարանում չկա տվյալ ենթատեսակին համապատասխանող Հայտարարություն ապա այդ ենթատեսակը չի ներկայացվում վերը նշված ցանկում: Ենթատեսակի ընտրության պարագայում նոր էջով ներկայացվում են դրան համապատասխանող Շտեմարանում առկա Հայտարարությունների վերնագրերը, հրապարակման (այն է Շտեմարանում մուտքագրման) ամսաթվերը և համառոտ նկարագրերը՝ խմբավորված ըստ Հայտատուների անվանումների: Նույն կերպ ներկայացվում են տեղեկություններ հայտարարությունների տեսակներին համապատասխանող Հայտարարությունների վերաբերյալ, երբ Օգտագործողի կողմից ընտրված հայտարարությունների տեսակները չունեն ենթատեսակներ:

Հայտարարության վերնագրերը և համառոտ նկարագրերը պետք է ներկայացված լինեն հղումների տեսքով, որոնք ընտրելիս Օգտագործողը անցում կկատարի համապատասխան Հայտարարության ամբողջական տեքստը պարունակող էջին:

Հայտարարության ամբողջական տեքստը պարունակող էջը, այսուհետև հայտարարության էջ, պետք է պարունակի Հայտարարության ամբողջական տեքստը, այդ թվում տեղեկություններ Հայտատուի մասին, Հայտարարության հրապարակման ամսաթվի և արխիվ տեղափոման ամսաթվի մասին, Հայտարարության տեսակի մասին, Հայտարարության տեքստը, ինչպես նաև Հայտարարության ամբողջական տեքստը և Հայտարարության տեքստին կցված այլ փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակներին հղումներ՝ այդպիսով իսկ հնարավորություն ստեղծելով Օգտագործողի համար պահպանել Հայտարարությունը և նրան կցված փաստաթղթերը իր համակարգչում՝ Կայքի սերվերային համակարգչից բեռնավորման միջոցով:

ԱՐԽԻՎ

Կայքի Արխիվ բաժինը պետք է ապահովի Կայքում հրապարակված բոլոր Հայտարարությունների արտապատկերումը, որոնք երբևիցե ներկայացվել են Կայքում, սակայն հրապարակման համար նախատեսված ժամանակահատվածի լրանալուց հետո հանվել են հայտարարություններ բաժնից:

Կայքի Արխիվ բաժնի ներկայացումը օգտագործողին կատարվում է նույն սկզբունքով ինչ Հայտարարություններ բաժնում, այն է Հայտարարությունների մասին տեղեկությունները արտապատկերվում են էջի տեղեկատվական բլոկում և ներկայացվում են խմբավորված ըստ Օգտագործողի ընտրության՝ ըստ Հայտատուների կամ ըստ Հայտարարության տեսակի:

Օգտագործողի կողմից ընտրված Հայտարարության էջը ներկայցնելիս անհրաժեծտ է ապահովել "Արխիվ" բառի արտապատկերումը Հայտարարության էջի վերին աջ անկյունում հայտարարության տեքստից առաջ, որից հետո "Արխիվ տեղափոխման ամսաթիվը՝ " բառերը և ներկայացվի տվյալ Հայտարարության Արխիվ տեղափոխման ամսաթիվը:

ՈՐՈՆՈՒՄ

Կայքի որոնման բաժինը պետք է ապահովի Օգտագործողի համար անհրաժեշտ հայտարարությունների արագ որոնումը Շտեմարանում: Այս գործառույթը պետք է հնարավորություն ընձեռի Օգտագործողին որոնումը իրականացնել ըստ.

- առանցքային բառի կամ բառակապակցության
- հայտատուի/հայտարարատուների ընտրությամբ կամ առանց դրա
- հայտարարության տեսակի/տեսակների ընտրությամբ կամ առանց դրա
- հայտարարության հրապարակման ժամկետի/ժամանակահատվածի ընտրությամբ կամ առանց դրա
- որոնման տիրույթում ընդգրկել նաև հայտարարությունների Շտեմարանի արխիվը

Որոնման ընթացքում առանցքային բառի կիրառման դեպքում որոնումը իրականացվելու է Հայտարարությունների վերնագրերում և Հայտարարության ամբողջ տեքստում:

Առանց առանցքային բառի, սակայն հատարարատուի, հայտարարության տեսակի կամ հայտարարության հրապարակման ժամանակահատվածի ընտրության դեպքում, որոնման արդյունքները պետք է ներառեն Օգտագործողի կողմից կատարված ընտրությանը բավարարող բոլոր Հայտարարությունները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ.

Կայքի աշխատանքի և կայքում տեղադրված նոր հայտարարությունների մասին նորություններին Օգտագործողը կարող է նաև ծանոթանալ էլեկտրոնային փոստով՝ կայքի համապատասխան բաժնում անվճար բաժանորդագրվելու միջոցով:

Կայքի նորություններին բաժանորդագրվելու համար Օգտագործողը պետք է սեղմի «ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ» կոճակը, որից հետո բացված էջում կարող է ներկայացված ցուցակներից ընտրել իրեն հետաքրքրող հայտարարությունների տեսակը (տեսակները) և/կամ հայտարարատուին (հայտարարատուներին): Այնուհետեվ Օգտագորցողը պետք է էջի համապատասխան դաշտում մուտքագրի իր էլեկտրոնային փոստի հասցեն և սեխմի «ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼ» կոճակը:

Վերը նշված գործողությունների հետևանքով Կայքի բաժանորդագրման համակարգը պետք է գեներացնի գրանցման ունիկալ հղում և ուղարկի այն օգտագործողի կողմից նշված էլ-փոստի հասցեյով:

Օգտագործողը ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում էլեկտրոնային փոստով ստացված նամակի մեջ գտնվող գրանցման ունիկալ հղումին սեխմելով, այնուհետև բացված ինտերնետային կայքի համապատասխան էջում «Հաստատել գրանցումը» կոճակը սեղմելով, հաստատում է իր կողմից նշված էլետրոնային փոստի հասցեյի իսկությունը և իր կատարված ընտրությունը, որից հետո Կայքի բաժանորդագրման համակարգը գրանցում է տվյալները բաժանորդների շտեմարանում և գրանցված էլ. փոստի հասցեով՝ էլեկտրոնային նամակով, տեղեկացնում է բաժանորդագրության հաստատման մասին:

Օգտագործողը կարող է փոփոխել բաժանորդագրության տվյալները կրկնելով բաժանորդագրվելու համար անհրաժեշտ գործողությունները:

Օգտագործողը կարող է հրաժարվել բաժանորդագրումից Կայքի բաժանորդագրման համակարգի համապատասխան դաշտում լրացնելով այն էլ-փոստի հասցեն, որով նա բաժանորդագրված է Կայքում: Բաժանորդագրումից հրաժարվելու դեպքում նույպես օգտագործողին կուղարկվի ունիկալ հղում (link), որի միջոցով նա կկարողանա հաստատել իր բաժանորդագրումից հրաժարվելու իր որոշումը:

ՄԵՐ ՄԱՍԻՆ.

Կայքի «ՄԵՐ ՄԱՍԻՆ» բաժնում անհրաժեշտ է ապահովել հետևյալ տեղեկությունների արտապատկերումը՝

- Կայքի ստեղծման նպատակը,
- Սպառիչ տեղեկություններ Կայքը վարողի մասին (ձեռնարկության անվանում, հասցե, հեռախոսի համար, էլ. փոստի հասցե և այլ),
- Կայքի ստեղծման և վարման հետ կապված բոլոր իրավական ակտերը,
- Հայտարարատուներից հայտարարություններ ընդունող մարմնի մասին տեղեկություններ (մարմնի անվանում, հասցե, հեռախոսի համար, էլ. փոստի հասցե և այլ):

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԿԱՅՔԻՑ

Այս բաժնում պետք է լինեն տեղեկություններ կայքի կառուցվածքի մասին, ինչպես նաև համառոտ ձեռնարկ Կայքից օգտվելու մասին: Այս բաժնում պետք է տեղադրվեն նաև հաճախակի տրվող հարցերը (ՀՏՀ) և նրանց պատասխանները՝ առանձնացված ենթաբաժնի տեսքով:

Կայքէջից օգտվելու մասին համառոտ ձեռնարկը մշակելու է Կայքի ստեխծման ծառայությունը մատուցող կազմակերպությունը (այսուհետև Կազմակերպություն):

2.2. Կայքի կառավարման համակարգ

Կայքի կառավարման համակարգը կոչված է ապահովելու Կայքի և կայքէջի կառավարման, կայքի Շտեմարանում պահվող տվյալների, այն է Հայտատուների և նրանց կառուցվածքային ստորաբաժանումների անվանումների (եթե այդպիսիք կան), Հայտարարությունների տեսակների և ենթատեսակների (եթե այդպիսիք կան), Հայտարարությունների և այլ ներկայացված տեղեկատվության մուտքագրման, խմբագրման, Հեռացման գործառույթները:

Կառավարման համակարգը պետք է հնարավորություն տա Կայքը վարողին՝

- կատարել Հայտարարությունների մուտքագրման, խմբագրման, հեռացման գործառույթները: Ընդ որում պետք է ապահովված լինի Կայքի Շտեմարանում հայտարարությունների հետ միաժամանակ մի քանի օգտագործողների աշխատելու հնարավորությունը՝ հայտարարությունների մուտքագրման, խմբագրման և հեռացման գործառույթները իրականացնելիս:
- կազմակերպել Շտեմարանում պահվող տվյալների հետ աշխատելու արտոնությունների բազմաստիճան կառուցվածք, Շտեմարանում պահվող տվյալների անվտանգության և ամբողջականության պահպանման համար
- ավելացնել, հեռացնել Շտեմարանի տվյալների հետ աշխատելու իրավունք ունեցող անձանց անհատական պրոֆիլները՝ նշելով նրանց արտոնությունների աստիճանը: Խմբագրել եղած օգտագործողների պրոֆիլները, այդ թվում նաև փոփոխելով վերջիններիս արտոնությունների աստիճանը
- հավաքել և պահպանել տեղեկություններ կայքում և Շտեմարանում կատարված փոփոխությունների մասին (երբ է կատարվել փոփոխությունը, ինչ տեսակի փոփոխություն է կատարվել, որտեղ է կատարվել փոփոխությունը և ում կողմից է այն կատարվել)
- կատարել Շտեմարանի տվյալների պահուստավորում սերվերային համակարգչի այդ նպատակով առանձնացված պահոցում՝ հետագայում տեղեկատվության պահպանման այլ կրիչների վրա տեղափոխելու և արխիվածնելու համար

- կազմակերպել Կայքի աշխատանքի վերաբերյալ վիճակագրական տվյալների արտապատկերումը՝ ըստ անհրաժեշտ բնութագրիչների (օգտագործողների քանակ, այցելությունների քանակ, հաճախակի դիտվող հայտարարությունների դասակարգում ըստ Հայտատուների կամ հայտարարության տեսակների, որոնման ընթացքում հաճախակի օգտագործվող առանցքային բառերի և այլն)
- Կայքի տեղեկատվության անվտանգության ապահովում արտաքին (ինտերնետային) հարձակումներից՝ ժամանակակից ծրագրային միջոցների կիրառմամբ

Կազմակերպությունը պետք է մշակի Կայքի կառավարման համակարգից օգտվելու մասին համառոտ ձեռնարկ: Ձեռնարկը պետք է տրամադրվի ինչպես տպագրված տեսքով և հիմք ծառայի կայքի վարող կազմակերպության աշխատակիցների համար, այնպես նպետք է ներկայացված լինի կայքի կառավարման համակարգում՝ Օգնություն բաժնի տեսքով:

3. Կայքի մշակման գործընթացի, փորձարկումների, հանձման-ընդունման և երաշխիքային սպասարկման հետ կապված պահանջներ

Ծառայություն մատուցող Կազմակերպությունը պետք է մասնագիտացված լինի վեբ կայքերի մշակման հարցերում և Կայքի ստեղծման և թողարկման աշխատանքների ընթացքում կատարի հետևյալ պահանջները՝

- Նախքան Կայքի ծրագրաշարը մշակելը Կազմակերպությունը պետք է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համապատասխան մասնագետներին (այսուհետև Խորհրդատուներ) վերանայման, մեկնաբանությունների և վավերացման համար ներկայացնի ծրագրաշարի մշակած գրաֆիկական միջերեսը և կայքէջի կառուցման նախնական տեխնիկական նկարագիրը: Կազմակերպությունը պետք է մշակի Կայքի բնականոն աշխատանքը ապահովելու համար անհրաժեշտ համակարգչային ցանցի կառուցվածքը՝ հաշվի առնելով Կայքի արագարոծության, տեղեկատվական անվտանգության և այլ միջազգայնորեն ընդունված նորմերը: Անհրաժեշտ է նաև ներկայացնել կայքի տեղադրման և գործարկման անհրաժեշտ տեխնիկական և ծրագրային միջոցների ցանկ, այդ թվում՝
    - Նախընտրելի սերվերային համակարգի տեխնիկական բնութագիրը
    - Անհրաժեշտ ցանցային հանգույցների բնութագրերը
    - Սերվերային համակարգում կիրառվելիք անհրաժեշտ ծրագրային փաթեթների ցանկը
- Կազմակերպությունը պետք է սերտ համագործակցության մեջ լինի Խորհրդատուների հետ կայքի կառուցվածքի կամ կառուցվածքային միավորների, կայքի աշխատանքի սկզբունքների, գրաֆիկական միջերեսի ձևավորման ընթացքում առաջացած հարցերը քննարկելու համար;
- Կազմակերպությունը, համաձայնեցնելով Խորհրդատուների հետ, պետք է կազմի աշխատանքների իրականացման ժամանակացույց և պարբերաբար Հայաստանի Հանրապետության արդարարադության նախարարության աշխատակազմին հաշվետվություններ ներկայացնի կատարված աշխատանքների վերաբերյալ;
- Կազմակերպությունը պետք է անցկացնի Կայքի ծրագրաշարի փորձարկում և փորձարկման ընթացքում հայտնաբերված սխալների և անճշտությունների ուղղման աշխատանքներ:
- Կայքի ծրագրաշարի աշխատանքային տարբերակը ներկայացված ժամկետում մշակելուց հետո Կազմակերպությունը Խորհրդատուներին է ներկայացնում կայքի աշխատանքային տարբերակը, ապահովվելով առանցքային գործառույթների աշխատանքը, կայքի փորձնական կիրառումը և առնվազն մեկ շաբաթյա ժամանակահատվածում փորձարկային ռեժիմում աշխատանքը: Պետք է ապահովված լինի թե կայքէջի օգտագործողի գրաֆիկական միջերեսի ներկայացումը՝ իր հիմնական գործառույթներով, և թե կառավարման համակարգի հիմնական գործառույթների աշխատանքը:
- Կայքի ծրագրաշարի ներկայացված աշխատանքային տարբերակի ուսումնասիրությունից հետո, ներկայացված պահանջների բավարարման դեպքում, Կազմակերպությունը պարտավոր է ներկայացված ժամկետներում ավարտել Կայքի ծրագրաշարի ստեղծման աշխատանքները՝ ներառյալ բոլոր գործառույթների

ստույգ իրականացումը, ինչպես նաև օգտագործողի և կառավարման համակարգի գրաֆիկական միջերեսների ավարտին տեսքով ներկայացումը

- Կազմակերպությունը պարտավոր է ապահովելու իր կողմից ստեղծված Կայքի ծրագրաշարի տեղադրումը և գործարկումը այդ նպատակով տրամադրված սերվերային համակարգչում:
- Կազմակերպությունը պարտավոր է ապահովելու հրատապ երաշխիքային սպասարկում՝ իր կողմից ստեղծված Կայքի ծրագրաշարի տեղադրումից և գործարկումից հետո առնվազն մեկ ամսվա ընթացքում: Հրատապ երաշխիքային սպասարկման իրականացումը ենթադրում է օգտագործողների կամ կայքի վարողի կողմից անսարքության կամ սխալների հայտնաբերման պարագայում Կազմակերպությանը տեղյակ պահելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում արձագանքումը առաջացած խնդիրներին, դրանց առաջացման պատճառների բացահայտումը և հրատապ լուծումը՝ այդ թվում նաև Կայքի ծրագրաշարում անհրաժեշտ փոփոխություն կատարելու միջոցով:
- Կազմակերպությունը պարտավոր է ապահովելու երաշխիքային սպասարկում՝ իր կողմից ստեղծված Կայքի ծրագրաշարի տեղադրումից և գործարկումից հետո առնվազն վեց ամսվա ընթացքում: Երաշխիքային սպասարկումը ենթադրում է օգտագործողների և կայքը վարողի կողմից Կայքի գործարկման ընթացքում հայտնաբերված սխալների ուղղումը Կազմակերպության կողմից:
- Կազմակերպության կողմից ստեղծված Կայքի ծրագրաշարը հանդիսանալու է ՀՀ արդարադատության նախարարության սեփականությունը:
- Կայքի հանձնման-ընդունման ընթացքում Կազմակերպությունը հանձնելու է ՀՀ Արդարադատության նախարարությանը՝
  - Կայքի ամբողջական ծրագրաշարը, այդ թվում նաև էլեկտրոնային տեսքով ներկայացնելով օգտագործված բոլոր տեքստային և գրաֆիկական ֆայլերը: Կազմակերպությունը պետք է նաև տրամադրի Կայքի կառավարման համակարգի օգտագործման ձեռնարկը՝ նաև էլեկտրոնային տեսքով:
  - Կազմակերպությունը պետք է տրամադրի նաև Կայքի վերջնական աշխատանքային տարբերակը պարունակող սերվերային համակարգի ծրագրային մասի պատճենը՝ լազեռային կամ կոշտ սկավառակի տեսքով, ապահովելու համար կայքի գործող ծրագրաշարի խափանման դեպքում համակարգի ամբողջական վերականգնումը՝ առանց պահվող տեղեկատվության, այն է Շտեմարանի, վնասման:
  - Սերվերային համակարգում կիրառվելիք անհրաժեշտ ծրագրային փաթեթները, համաձայն նախորոք ներկայացված ցանկի՝ համապատասխան լիցենզիաների առկայությունը ապահովելով:

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ք. Երևան, Կոմիտասի պող. 54[բ]	ք. Երևան, Վրացական 4-րդ նրբ.,7-10
Հայէկոնոմբանկ, Արաբկիրի մ/ճ	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»ՓԲԸ
Հ/Հ 1630058561289	Հ/Հ 2200001294 23-000
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.S	Կ.S

Հավելված N 2
«16» 11 2007թ. կնքված
N ԾՁԲ - 07/66 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/հազ. ՀՀ դրամ/

NN	Պատվիրատուի և գնման առարկայի անվանումը	Ծառայության մատուցումը՝ 2007թ. ընթացքում				Ընդամենը տարեկան
		Iեռ.	IIեռ.	III եռ.	IVեռ. /մինչև դեկտեմբերի 28-ը/	
1	2	3	4	5	6	7
	ՀՀ արդարադատության նախարարություն ք. Երևան, Վ. Սարգսյան 3					
1	*«Պաշտոնական հայտարարություններ» կայք էջի ստեղծման և վարման ծառայություններ*				22957.0	22957.0

Պ ա տ վ ի ր ա տ ու

ք. Երևան, Կոմիտասի պող. 54[բ]

Հայէկոնոմբանկ, Արաբկիրի մ/ճ

Հ/Հ 163058561289

(ստորագրություն)

Կ.S

Կ ա տ ա ր ո ղ

ք. Երևան, Վրացական 4-րդ նրբ.,7-10

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»ՓԲԸ

Հ/Հ 220000129423-000

(ստորագրություն)

Կ.S

Հավելված N 3
«16» 11 2007թ. կնքված
N ԾՁԲ - 07/66 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/հազ. ՀՀ դրամ/

N N	Ծառայության անվանումը	Ֆինանսավորումը 2007թ. ընթացքում՝ ՀՀ 2007թ. պետական բյուջեից												Ընդամենը տարեվերջ
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	«Պաշտոնական հայտարարություններ» կայք էջի ստեղծման և վարման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-		22957.0	22957.0	22957.0

Պ ա տ վ ի ր ա տ ու

ք. Երևան, Կոմիտասի պող. 54[բ]

Հայէկոնոմբանկ, Արաբկիրի մ/ճ

Հ/Հ 163058561289

(ստորագրություն)

Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ

ք. Երևան, Վրացական 4-րդ նրբ.,7-10

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ 220000129423-000

(ստորագրություն)

Կ.Տ